բէն, վասնզի երկքն ալ զա՛տ զատ վայրերու մէջ կը գտնուին ներկայիս։ Ասոնցմէ առաջին երկուքը աւելի չահեկանութիւն կը ներկայացնեն պատմական տեսակէտով. իսկ երրորդը, ներկա՛ն, չահեկան պիտի դառնայ անշուշտ աւելի ուշ տարիներու մէջ։

Ինչպէս Հայաստանի, Փոքր Ասիոյ, Կ. Պոլսոյ և հայկական հնագոյն գաղութներու, նոյնպէս ալ Հալէպի փոքրաթիւ Հայոց հնագոյն գերեզմանատունը, ԺԴ.րդ դարէն սկսած մինչև ԺԶ.րդ դարու վերջին քառորդը (1579), կը գրաւէր Սալիպէ թաղի գրեթէ իրարու կից Ս. Քառասուն Մանկունք և Ս. Աստուածածին եկեղեցիներու շրջավայրին մէջ, ուր մինչև այսօր տակաւին իբր վերջին հանգստարան ամփոփուած են քահանայից մարմինները։ Վերջին դամբարանը զոցուեցաւ ողբացեալ Ներսէս Ա. Քհնյ. Թավուշճեանի վրայ, Աստուածածին եկեղեցւոյ դրան արտաքին մուտքին առջև։

Վերջին տարիներու մէջ պատահական եղանակով միայն կատարուած պեղումներէն երևան եկաւ որ ԺԴ.րդ դարուն և աւելի յառաջ, այս եկեղեցիներու և կամ Սալիպէ թաղի մէկ մասին տեղը Հրէից և Ասորոց գերեզմանատունը էր և արդի Ս. Քառասնից եկեղեցւոյ հնագոյն մատուռը աւանդաբար ցոյց կը տրուի իբր Ասորական փոքր վանք մը, Ասորական գերեզմանատան մէջ, երբ այս թաղը բաւական հեռու էր բուն հին Հալէպէն, որ կը գրաւէր արդի միջնաբերդը, արտաքին քանի մը թաղերով։ Անհաւանական չէ ենթադրել որ Սսոյ առումով և Կիլիկեան արքունիքի գրաւումով, Կիլիկիոյ Հայոց մէկ մասին գաղթումով և Հալէպ հաստատուելով, Ասորական այս փոքր վանքին կամ մատրան շրջանակը յատկացուած ըլլայ եկեղեցի կամ պանդուխտ Հայոց, միշտ բուն քաղաքէն դուրս և նոյն մատուռը իր շրջականներով նուիրուած ըլլայ Հայոց կամ գնուած անոնց կողմէ։ Այսքանը միայն իրական է ու պատմական որ Հայեր ԺԵ. դարու առաջին քառորդին մէջ ունեցած են եկեղեցական կանոնաւոր կազմակերպութիւն, եկեղեցիով ու քահանայով, գերեզմանատունով և այլ անհրաժեշտ յարմարութիւններով։ Ամէն կասկածէ վեր է որ Հալէպի Հայոց իբր նախնական գերեզմանատուն ծառայած է Ս. Քառասնից մատրան շրջավայրը, որուն թէև մէկ մասը միայն ծառայած է իբր գերեզմանատուն և կը մնայ մինչև այսօր, բայց մեծագոյն մասը յատկացուած է եկեղեցին ընդարձակելու և յարակից շէնքերը շինելու, որոնց մէջ կ'իյնայ այժմու Մարոնիթ Մետրապոլտարանը։ Այդ հնագոյն գերեզմանատան խաչքարերն ու այլ տապանաքարերը անկասկած որ մասամբ անհետացած են ժամանակի ընթացքին, բայց կարևոր մասը զերծ մնացած է աւերումէ, որովհետև խղճամիտ և հեռատես ձեռքեր զանոնք զետեղած են եկեղեցւոյ ներքին և արտաքին որմերուն վրայ, ուր կը մնան մինչև այսօր։ Այս երևոյթը ընդհանուր է թէ՛ մեր և թէ ուրիշ ազգերու մէջ։ 1911 ին Քէօթահիա (Կուտինա) այցելութեանս միջոցին տեսայ բազմաթիւ խաչքարեր և հին տապանաքարեր՝ որոնք խնամքով զետեղուած էին քաղաքի Հայոց երկու եկեղեցիներու բարձրաբերձ զանգակատանց աշտարակներու որմերուն մէջ և կը մնային դեռ մինչև վերջերս։ Մեր ձեռքին տակ գտնուող հին խաչքարերը կը պատկանին 1579 թուականէն առջի շրջանին։ Թէև այս թուականէն ասդին Հայերը ուրիշ քրիստոնեայ հին հասարակութեանց հետ ունեցան Ազիզիյէ թաղի երկք մասերէ բաղկացած գերեզմանատունները, բայց Ս. Քառասնից և Ս. Աստուածածին եկեղեցիներու բակը, ինչպէս ըսինք, յատկացուեցաւ եկեղեցական և աշխարհական ականաւոր մեռեալներու։ Իսկ Ս. Քառասնից հնագոյն մատուռը, կանխագոյն ժամանակներէն ասդին իբր հանգստարան ծառայեց Կաթողիկոսներու և նշանաւոր Առաջնորդներու։ Քահանայք, հինէն ի վեր, մեծագոյն մասով թաղուած են եկեղեցիէն դուրս, և քիչ բացառութեամբ ներսը թաղուողներ կան։ Հա-